«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիր

- Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական ներդրումային բանկը ստորագրել են Հարևանության ներդրումային հարթակի դրամաշնորհային համաձայնագիր՝ Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Ըստ համաձայնագրի՝ Եվրոպական հանձնաժողովը ծրագիրը կֆինանսավորի մինչև 4,25 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհի չափով:
- Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել տարածաշրջանային փոխհաղորդակցությունը Հայաստանի տրանսպորտային ցանցի կատարելագործման, մասնավորապես՝ ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումների ներդրմամբ և համապատասխան մարմինների ու շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացմանն աջակցելու միջոցով՝ ճանապարհային անվտանգությանն առնչվող միջազգային չափանիշներին հասնելու համար:
- Ծրագիրը մեկնարկել է 04.12.2019թ., ավարտը նախատեսված է 15.12.2022թ.:
- Ծրագիրը ներառում է հետևյալ գործողությունները՝

✓ Բաղադրիչ 1 - Հ-8 հանրապետական ճանապարհի և Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի հետ սահման միջպետական ճանապարհի վրա նախանշված 9 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքներ,

✓ Բաղադրիչ 2 - Մ-2 և Մ-4 միջպետական ճանապարհների վրա նախանշված 9 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքներ,

✓ Բաղադրիչ 3 - Մ-3, Հ-30, Հ-63 և Հ-69 միջպետական և հանրապետական ճանապարհների վրա նախանշված 5 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքներ,

✓ Բաղադրիչ 4 - Մ-2, Մ-3, Մ-4, Մ-11, Մ-12, Մ-16, Հ-8, Հ-53 միջպետական ճանապարհների վրա նախանշված 23 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքներ,

✓ Բաղադրիչ 5 - Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացի իրականացում,

✓ Բաղադրիչ 6 - Մ6, Մ-5 միջպետական և Հ-8 հանրապետական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգության իրազեկման գովազդային վահանակների տեղադրում,

✓ Բաղադրիչ 7 - ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ առաջարկների փաթեթի մշակում:

- Հ-8 և Մ-5 ճանապարհների 9 վտանգավոր կետերի շինարարական աշխատանքներն ավարտվել են 2021 թվականին:
- 2021 թվականին մեկնարկել են նաև Մ-2 և Մ-4 միջպետական նշանակության ճանապարհների 9 վթարավտանգ կետերի վերացման աշխատանքները:
- Մ-3, Հ-30, Հ-63 և Հ-69 միջպետական և հանրապետական ճանապարհների վրա նախանշված 5 վտանգավոր, ինչպես նաև Մ-2, Մ-3, Մ-4, Մ-11, Մ-12, Մ-16, Հ-8, Հ-53 միջպետական ճանապարհների վրա նախանշված 23 վտանգավոր կետերի վերացման ուղղությամբ աշխատանքները նախագծման կամ նախամրցութային փուլերում են:

- Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթաց, որի մասնակիցներից 19-ը ստացել են ճանապարհային անվտանգության աուդիտի որակավորում։
- Մ-6 ճանապարհի վրա տեղադրվել են ճանապարհային անվտանգության իրազեկման երկու վահանակներ։
- ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ 2021թ. կազմակերպվել է աշխատաժողով։ Խորհրդատուի կողմից մշակված փաստաթուղթը ընդունվել է «Ճանապարհային Դեպարտամենտ» հիմնադրամի կողմից։